փառքն, հարստութիւն, և միաբանք, միայն դերեզմանաքարերն են մնացել վարդապետաց և եպիսկոպոսաց յաւիտենական վկայ յառաջայ փառաւորութեան և այժմեան աւերակութեան այն սուրբ տաճարին։ Որպէս հաւաստի տեղեկացայ ես, յառաջ շատ վարելահողեր է ունեցել, բայց Հայ ազգի բնակիչք Սաղիան գիւղի վանքը աւերակ լինելու պատճառաւ սեպհականել են իրանց։ Յետ քանի ամաց ամայի մնալով այս վանքը խսպառ վերջին դրութեան է հասել։ Վերջին հարուածն էլ տուած են այս տաճարի շինութեան 27 և 59 տարուայ ահագին երկրաշարժն Զամախուոյ։ «Այս վանքն խսպառ խարխալված է, և իրան աչք ձըգած հոգեսէր Հայազգեացն է սպասում, որ վերանորոգեն իրան 'ի սէր Քրիստոսի նախավկային սրբոյն Ստեփաննոսի։ Ես որքան որ տեսնումեմ, այս սուրբ տաճարի աւերակ լինելն, արտասուք եմ թափում, զԱստուած եմ աղաչում, որ օգնական լինի և շարժէ Հայազգեաց սիրտը, որ այս սուրբ տաճարը նորոգեն։ Այս վանք մի անդրանիկ վանք է Զամախու վիճակի համար։ Այս վանքումն են միշտ պարծանք ունեցած Հայեր օտար ազգաց յառաջ, և այս վանքում է Քրիստոսի սուրբ խաչն բարձրացրած փոխանակ կռոց արձաններին. բայց ինչ ասեմ. որ այժմ խսպառ հեռացել է Հայոց ազգի աչքից և սրտից։ Ուրեմն այս իմ սրտաշարժ խօսքերով կաղաչեմ հոգեսիրաց ազգիս, որ բարերար հանդիսանան այս վանքի շինութեան, սորան խսպառ ամայի չ'թողնելոյ համար, եօթն տարի յառաջ հոգևոր իշխանութիւն Հայոց Զամախուոյ, մի Արեղայ է ձեռնադրել Սարգիս անուն Միրզաբէկեան, և վանքն յանձնել է նորա պաշտպանութեան։ Այս վարդապետն որքան կարողացել է' իրան աշխատանքը չէ խնայել այն տաճարի համար։ Սա սկսել է նորոգել այդին, մինչև այն աստիճան է հասցրել, որ այժմ բաւական գինի է տալիս ըստ բերման տարւոյն։ Սորան օգնական լինելով և առաջնորդք Զամախուոյ Մովսէս վարդապետ Մաղաքեան և Գէորգ եպիսկոպոսն Երևանցի՝ երկու սենեակ են շինել ուխտաւորաց համար և երկու սենեակ վանահօր բնակութեան համար։ Այս սուրբ Ստեփաննոս նախավկայի վանքն է եկեղեցի Հայոց Սաղիան գիւղի որ է 75 գերդաստան։ Նոյնպէս ես եկե-